



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 220829

«10» դեկտեմբեր 2018 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. 2018թ. ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի «Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին ԵՊՀ-ում հիմնական աշխատողներին վճարել տարեվերջյան դրամական պարգևատրում՝ նրանց հիմնական աշխատանքային պայմանագրով (անհատական իրավական ակտով) սույն թվականի դեկտեմբեր ամսվա համար հաշվարկված աշխատավարձի չափով՝ բայց ոչ ավելի քան մեկ դրույքը:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով սահմանված պարգևատրումը չի վճարվում 2018 թվականի ընթացքում աշխատանքի ընդունված և ընդհանուր վեց ամսից պակաս աշխատանքային ստաժ ունեցող աշխատողներին, գիտական (գիտատեխնիկական) աշխատանքներում (ծրագրերում) ներգրավված անձանց և սույն հրամանի ստորագրման օրվա դրությամբ մինչև երեք տարեկան երախայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողներին:

3. ԵՊՀ գլխավոր հաշվապահին՝ սույն հրամանով սահմանված դրամական պարգևատրումը վճարել սկսած 2018թ. դեկտեմբերի 14-ից:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ